Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Վարդաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմվում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3 x 4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3.անձը հաստատող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. ինքնակենսագրություն(Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատուղ փաստաթուղթ
7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում)
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատվում է պատճեների հետ, բնօրինակները վերադարձվում է մասնակցին:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **մայիսի 3-ը** ներառյալ ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մայիսի 5-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Շիրակի մարզի «Վարդաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Վարդաքար, 3 փողոց, 4 շենք, հեռախոս՝ **055711212**: